ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 93-Ա **12 փետրվարի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N 193-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի մայիսի 18-ի «Քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային ծառայությունների պետեր նշանակելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի մարտի 6-ի N 8 – Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 193-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

12.02.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի փետրվարի 12 - ի
N 93-Ա որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2020 թվականի մայիսի 18 - ի
N 193 - Ա որոշման

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐ

Հասարակական կարգի պահպանման ծառայության պետ - Ներքին գործերի նախարարության ոստիկանության Գեղարքունիքի մարզայի վարչության պետ /համաձայնությամբ/

Էներգետիկայի ծառայության պետ - «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Գեղամա» մասնաճյուղի տնօրեն, /համաձայնությամբ/

Նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետ - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Ինժեներական ծառայության պետ - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Բժշկական ծառայության պետ - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ

Առևտրի և սննդի ծառայության պետ պետ - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ

Գալոյան Մամիկոն - **կապի ծառայության պետ,** - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Սուչյան Խաժակ - **բնակչության հատուկ սպասարկումների ծառայության պետ**, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Խաչատրյան Գևորգ - **տրանսպորտային ծառայության պետ**, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Բիձյան Հակոբջան - **կոմունալ տեխնիկական ծառայության պետ**, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

12.02.2024

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ